ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Ե.Առաքելյանի

Քաղաքացիական գործ թիվ
ԼԴ/0917/02/21

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Նախագահությամբ՝ դատավոր **Դ. ՄԵՐՈԲՅԱՆԻ**
դատավոր՝ **Ս.ԹՈՐՈՍՅԱՆԻ**
դատավոր՝ **Ի.ԲԱՂՄԱՆՅԱՆԻ**

Հրապարակվում է 2023թ. նոյեմբերի 17-ին, ք.Երևանում

Գրավոր ընթացակարգով քննության առնելով հայցվոր Արամայիս Արսենի Ավետիսյանի վերաքննիչ բողոքը՝ ըստ վերջինիս հայցի ընդդեմ ՀՀ Լոռու մարզպետարանի՝ մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1655 և 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1691 հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջի վերաբերյալ, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Դատարան) 27.04.2023թ. վճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Արամայիս Արսենի Ավետիսյանը 02.03.2021թ. հայց է հարուցել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (դատավոր՝ Ա. Մկրտչյան) ընդդեմ ՀՀ Լոռու մարզպետարանի՝ մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1655 և 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1691 հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջի վերաբերյալ:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 11.10.2021թ. վճռել է հայցը մերժել:

Նշված վճռի դեմ Արամայիս Արսենի Ավետիսյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ն.Կարապետյան, դատավորներ՝ Լ.Գրիգորյան, Հ.Ենոքյան) 02.02.2022թ. որոշմամբ բավարարվել է մասնակի՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/0917/02/21 քաղաքացիական գործով 11.10.2021 թվականին կայացված վճիռը մասնակի բեկանվել է, և քաղաքացիական գործն ուղարկվել է նույն դատարան բեկանված ծավալով նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2022թ. որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2022թ. որոշման դեմ Արամայիս Ավետիսյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի 03.08.2022թ. որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2022թ. որոշման դեմ Արամայիս Ավետիսյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Թիվ ԼԴ/0917/02/21 քաղաքացիական գործը 16.09.2022թ. մակագրվել է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ե.Առաքելյանին (այսուհետ՝ նաև Դատարան):

Դատարանի կողմից 22.09.2022թ. կայացվել է քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Դատարանը 27.04.2023թ. վճռել է հայցը մերժել:

Նշված վճռի դեմ Արամայիս Արսենի Ավետիսյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Դ.Սերոբյան, դատավորներ՝ Ա.Պետրոսյան, Ա.Խառատյան) 14.06.2023թ. որոշմամբ ընդունել է վարույթ:

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Նկատի ունենալով, որ Բարձրագույն դատական խորհրդի 03.07.2023թ. որոշմամբ դատավոր Ա.Խառատյանի, իսկ 10.07.2023թ. թիվ ԲԴԽ-70-Ո-216 որոշմամբ՝ դատավոր Ա.Պետրոսյանի լիազորությունները դադարեցվել են, սույն բողոքի քննության հետագա ընթացքն ապահովելու համար սույն քաղաքացիական գործը 18.07.2023թ. մակագրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր՝ Դ.Սերոբյան, դատավորներ՝ Ս.Թորոսյան, Լ.Սարգսյան:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով՝ նախագահող դատավոր՝ Դ.Սերոբյան, դատավորներ՝ Ս.Թորոսյան, Լ.Սարգսյան 18.07.2023թ. կայացրել է «Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին» որոշում:

Նկատի ունենալով, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Տ.Նազարյանի՝ «Նպատակային արձակուրդ տրամադրելու մասին» թիվ 30Ա հրամանով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Լ.Սարգսյանին 01.08.2023թ. մինչև 18.12.2023թ. ներառյալ տրամադրվել է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ սույն քաղաքացիական գործը 04.09.2023թ. մակագրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր՝ Դ.Սերոբյան, դատավորներ՝ Ս.Թորոսյան, Ի.Բաղմանյան (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան):

Վերաքննիչ դատարանը 05.09.2023թ. կայացրել է «Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին» որոշում:

Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո Վերաքննիչ դատարանը 16.10.2023թ. որոշել է վերաքննիչ բողոքի քննությունը իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր նշանակելով 17.11.2023թ.:

<u>2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վերաքննիչ բողոքը բերվել է հետևյալ հիմքերի սահմաններում.

Բողոք բերող անձի համոզմամբ՝ Դատարանը խախտել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածը, ինչպես նաև չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ինչի հետևանքով սխալ է կիրառել Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը:

Վերաքննիչ բողոքի քննության համար ներկայացվել են հետևյալ հիմնավորումները.

Բողոք բերող անձը հայտնել է, որ Դատարանը գործի նոր քննության ընթացքում սահմանել է, որ Հայցվորը պետք է ապացուցի Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020

թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1691 հրամանում նշված օրերն՝ 23.12.2020թ. և 24.12.2020թ. աշխատանքի ներկայանալու անհնարինության փաստը:

Դատաքննության անցնելուց հետո վկաների ցուցմունքներից պարզվել է, որ Հայցվորը ներկայացել է աշխատանքի 23.12.2020թ. և 24.12.2020թ.: Վկաների հայտնած այս տեղեկությունը հաստատվել է նաև Պատասխանողի կողմից ներկայացված գրությամբ:

Դատարանը, վկայակոչելով գործի՝ որոշակի ծավալով քննվելու հանգամանքը, եզրակացրել է, որ հնարավոր չէ գնահատական տալ Արամայիս Ավետիսյանի՝ 23.12.2020թ. աշխատանքի ներկայանալու հանգամանքին նույնիսկ այն պարագայում, որ Պատասխանող կողմը նույնպես ընդունել է, որ Արամայիս Ավետիսյանը այդ օրն առավոտյան ներկայացել է աշխատանքի:

Դատարանին ներկայացրել է միջնորդություն, խնդրելով սահմանել գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա լրացուցիչ փաստը՝ Արամայիս Ավետիսյանի՝ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 29.12.2020թ. թիվ 1691 հրամանում նշված 23.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր և 24.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր աշխատանքի չներկայանալու փաստը:

Դատարանը մերժել է ներկայացված միջնորդությունը և հիմնվելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման հիման վրա հաստատված է համարել Արամայիս Ավետիսյանի՝ 23.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր չներկայանալու փաստը, ինչի արդյունքում իրավաչափ է համարել Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծումը:

Մինչդեռ գործում եղած ապացույցների բազմակողմանի գնահատման պարագայում ակնհայտ է, որ Արամայիս Ավետիսյանը մեկ աշխատանքային օր աշխատանքից չի բացակայել, ուստի առարկայազուրկ է քննարկել մեկ աշխատանքային օր աշխատանքի ներկայանալու անհնարինության փաստը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 27.04.2023թ. վճիռը և փոփոխել՝ բավարարելով հայցը, կամ գործն ուղարկել նոր քննության:

<u>3.Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 11.10.2021թ. վճռել է հայցը մերժել, որով հաստատել է հետևյալ փաստը. *«Համաձայն 25.12.2020թ. բացատրագրի՝ հայցվորը հայտնել է, որ **2020 թվականի դեկտեմբերի 23-ին և 24-ին մինչև ժամը 12.00 չի ներկայացել աշխատանքի,** քանի որ սրտիս շրջանում ունեցել է սուր ցավեր: Հայտնել է նաև, որ նույն թվականի մարտի 5-ին զոնդավորվել է և մարտի 11-ին ստենդավորվել, և այդ պատճառով սիրտը աշխատում է անկանոն, զանգահարել է մարզպետին, որ տեղեկացնի, սակայն չի պատասխանել: Ուղարկել է հաղորդագրություն, զանգահարել է նաև ընդունարան՝ մի քանի անգամ:»:* **(հատոր I, գ.թ. 91)**

2. ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 11.10.2021թ. վճռի դեմ Արամայիս Արսենի Ավետիսյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ն.Կարապետյան, դատավորներ՝ Լ.Գրիգորյան, Հ.Ենոքյան) 02.02.2022թ. որոշմամբ բավարարվել է մասնակի՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/0917/02/21 քաղաքացիական գործով 11.10.2021թ. կայացված **վճիռը մասնակի բեկանվել է**, և քաղաքացիական գործն ուղարկվել է նույն դատարան բեկանված ծավալով նոր քննության, որով հաստատել է այն փաստը, որ *«Համաձայն Արամայիս Ավետիսյանի 25.12.2020 թվականի բացատրագրի՝ «Հայտնում եմ Ձեզ, որ **սույն թվականի դեկտեմբերի 23-ին ամբողջ օրը և դեկտեմբերի 24-ին մինչև ժամը 12:00-ն չեմ ներկայացել աշխատանքի,** քանի որ սրտիս շրջանում ունեցել եմ սուր ցավեր, հայտնում եմ նաև, որ սույն թվականի մարտի 5-ին զոնդավորվել և*

մարտի 11-ին ստենդավորվել եմ և այդ պատճառով սիրտս աշխատում է անկանոն, ես այդ մասին զանգահարել եմ մարզպետ Ա.Խաչատրյանին, որ տեղեկացնեմ, սակայն զբաղված լինելու պատճառով չի պատասխանել, ես հաղորդագրություն եմ ուղարկել պարոն մարզպետին, որ հիվանդ եմ, զանգահարել եմ նաև ընդունարան մի քանի անգամ։»։ **(հատոր I, գ.թ. 146)**

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ դատարանը սույն քաղաքացիական գործով կայացրած դատական ակտը վերանայում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, այն է՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, պայմանով, որ վերաքննիչ բողոք բերողը իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լսված լինելու իրավունք: Հետևաբար (...), որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը *(տե՛ս, ի թիվս այլնի, Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի թիվ ԵԱՆԴ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը)*:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վճիռը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է **գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **մինչև գործի նոր քննությունը գործով հաստատված փաստերը գործի նոր քննության ժամանակ պարտադիր են դատարանի համար, բացառությամբ գործն ամբողջ ծավալով քննելու դեպքերի:**

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը *(տե՛ս, ի թիվս այլնի, Սուսաննա Արարատի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԴ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):*

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վերաքննիչ դատարանի լիազորությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությամբ ամրագրված՝ վերաքննիչ դատարանի՝ որպես առաջին ատյանի դատարանի որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը ստուգող վերադաս դատական ատյանի առաքելությամբ, իսկ գործի նոր քննության ծավալը պայմանավորված է վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով, որը նպատակ է հետապնդում երաշխավորելու դատավարության մասնակիցների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերադաս ատյանի կողմից նախկինում բեկանված և գործի ամբողջ ծավալով նոր քննության արդյունքում մինչև գործի նոր քննությունը գործով հաստատված փաստերը գործի նոր քննության ժամանակ Դատարանի համար պարտադիր լինելու առանձնահատկություններին:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննություն իրականացնող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, նախ և առաջ պետք է ստուգի նախկինում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից սահմանված նոր քննության ծավալը, մասնավորապես վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի բեկանման արդյունքում **գործը ամբողջ, թե որոշակի ծավալով** նոր քննության ուղարկելու հանգամանքը, որը Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ունի էական նշանակություն այն պատճառաբանությամբ, որ եթե վերադաս ատյանի կողմից գործը **որոշակի՝ ոչ ամբողջ ծավալով է ուղարկվում նոր քննության, ապա մինչև գործի նոր քննությունը գործով հաստատված փաստերը գործի նոր քննության ժամանակ Դատարանի համար պարտադիր են**, ի տարբերություն այն դեպքերի, երբ վերադաս ատյանը գործն ամբողջ ծավալով է ուղարկում նոր քննության:

Սույն գործով, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 11.10.2021թ. վճռել է հայցը մերժել, որով հաստատել է հետևյալ փաստը. *«Համաձայն 25.12.2020թ. բացատրագրի՝ հայցվորը հայտնել է, որ **2020 թվականի դեկտեմբերի 23-ին և 24-ին մինչև ժամը 12.00 չի ներկայացել աշխատանքի**, քանի որ սրտիս շրջանում ունեցել է սուր ցավեր: Հայտնել է նաև, որ նույն թվականի մարտի 5-ին զոնդավորվել է և մարտի 11-ին ստենդավորվել, և այդ պատճառով սիրտը աշխատում է անկանոն, զանգահարել է մարզպետին, որ տեղեկացնի, սակայն չի պատասխանել: Ուղարկել է հաղորդագրություն, զանգահարել է նաև ընդունարան՝ մի քանի անգամ:»:* Նշված վճռի դեմ Արամայիս Արսենի

Ավետիսյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ն.Կարապետյան, դատավորներ՝ Լ.Գրիգորյան, Հ.Ենոքյան) 02.02.2022թ. որոշմամբ բավարարվել է մասնակի՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/0917/02/21 քաղաքացիական գործով 11.10.2021 թվականին կայացված **վճիռը մասնակի բեկանվել է**, և քաղաքացիական գործն ուղարկվել է նույն դատարան բեկանված ծավալով նոր քննության, որով հաստատել է այն փաստը, որ *«Համաձայն Արամայիս Ավետիսյանի 25.12.2020 թվականի բացատրագրի՝ «Հայտնում եմ Ձեզ, որ **սույն թվականի դեկտեմբերի 23-ին ամբողջ օրը և դեկտեմբերի 24-ին մինչև ժամը 12:00-ն չեմ ներկայացել աշխատանքի**, քանի որ սրտիս շրջանում ունեցել եմ սուր ցավեր, հայտնում եմ նաև, որ սույն թվականի մարտի 5-ին զոնդավորվել և մարտի 11-ին ստենդավորվել եմ և այդ պատճառով սիրտս աշխատում է անկանոն, ես այդ մասին զանգահարել եմ մարզպետ Ա.Խաչատրյանին, որ տեղեկացնեմ, սակայն զբաղված լինելու պատճառով չի պատասխանել, ես հաղորդագրություն եմ ուղարկել պարոն մարզպետին, որ հիվանդ եմ, զանգահարել եմ նաև ընդունարան մի քանի անգամ:»:*

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (նախագահող դատավոր՝ Ն.Կարապետյան, դատավորներ՝ Լ.Գրիգորյան, Հ.Ենոքյան) 02.02.2022թ. որոշմամբ սույն քաղաքացիական գործը նոր քննության է ուղարկել հետևյալ ծավալով. *«Ինչ վերաբերում է երկրորդ հանգամանքին, այն է՝ հայցվորի բացատրագրում նշված տեղեկությունները հարգելի գնահատելուն, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ապացուցման ենթակա են գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավաբանական փաստերը, որոնք պարզելն անհրաժեշտ է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի (նորմերի) ճիշտ կիրառման և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար կամ այն հանգամանքները, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են որոշակի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Մինչդեռ, որոշակի հանգամանքը հարգելի կամ անհարգելի գնահատելն իրավաբանական փաստ չէ և չի կարող ներառվել ապացուցման առարկայի մեջ. այդ հանգամանքը ներկայացված ապացույցների հաշվառմամբ գնահատում է Դատարանը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործատուն չէր կարող կրել աշխատանքի չներկայանալու բացատրության մեջ նշված հիմքերը ոչ բավարար գնահատելու ապացուցման պարտականությունը:*

*Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ **միայն վերոնշյալ մասով առաջացել է գործի նոր քննության անհրաժեշտություն**՝ հաշվի առնելով, որ ապացուցման ենթակա կարող է լինել աշխատողի՝ աշխատանքի ներկայանալու անհնարինությունը, այլ ոչ թե բացատրագրում նշված տվյալները ոչ հարգելի գնահատելու հանգամանքը:»:*

Վերոնշյալ իրավանորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թե՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 11.10.2021թ. վճռով, թե՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (նախագահող դատավոր՝ Ն.Կարապետյան, դատավորներ՝ Լ.Գրիգորյան, Հ.Ենոքյան) 02.02.2022թ. որոշմամբ հաստատվել է սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ **հայցվորը 23.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր և 24.12.2020թ. մինչև ժամը 12:00-ը չի ներկայացել աշխատանքի**՝ որպիսի պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործը որոշակի, այն է՝ **23.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր և 24.12.2020թ. մինչև ժամը 12:00-ն աշխատանքի ներկայանալու**

անհնարինության պարզման ծավալով է ուղարկվել նոր քննության, Դատարանի համար մինչև գործի նոր քննությունը սույն գործով հաստատված փաստերը, մասնավորապես, **23.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր և 24.12.2020թ. մինչև ժամը 12:00-ը աշխատանքի չներկայանալու փաստը, պարտադիր են**, քանի որ օրենսդիրը գործը **ամբողջ ծավալով** նոր քննության ուղարկելն է դիտարկել այն միակ բացառությունը, որի դեպքում Դատարանի համար պարտադիր չէր սույն գործի նախորդ քննության ժամանակ հաստատված փաստերը՝ որպիսի հանգամանքը բազմիցս շեշտադրել է նաև Դատարանը բողոքարկվող դատական ակտում, իսկ փաստերի նման դասավորվածության պայմաններում բողոք բերող անձը վերաքննիչ բողոքի փաստարկները նշված օրերին աշխատանքի չներկայանալու **անհնարինության հետ կապված եզրահանգում անելիս** Դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու հիմնավորման փոխարեն նվիրել է 23.12.2020թ. և 24.12.2020թ. իր կողմից աշխատանքի **ներկայանալու փաստը** վկաների ցուցմունքներով, իր համոզմամբ, հիմնավորվելուն և 23.12.2020թ. ու 24.12.2020թ. աշխատանքի չներկայանալու փաստը ապացուցման առարկայում ներառելու միջնորդությունը Դատարանի կողմից մերժելուն, մինչդեռ դրանք սույն գործի համար այլևս չունեն էական նշանակություն, քանի որ բողոքարկվող դատական ակտի կայացման պահին Դատարանի համար արդեն իսկ պարտադիր է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից հաստատված **23.12.2020թ. մեկ ամբողջական աշխատանքային օր և 24.12.2020թ. մինչև ժամը 12:00-ը** հայցվորի կողմից աշխատանքի չներկայանալու փաստը՝ դրանով պայմանավորված այն չէր կարող ներառվել ապացուցման առարկայում, հետևաբար՝ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ վերաքննիչ բողոքի նշված փաստարկներն անհիմն են:

Ամփոփելով վերոգրյալը, և հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը գնահատել է ներկայացված բոլոր ապացույցները, և դատական ակտ է կայացրել՝ ղեկավարվելով այդ բոլոր ապացույցների հիման վրա հաստատված փաստերի նկատմամբ կիրառելի և վերաբերելի նյութական և դատավարական իրավունքի նորմերով՝ այդպիսով հանգելով հիմնավոր և իրավաչափ եզրահանգման, որ հայցը ենթակա է մերժման, ուստի Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ներկայացված վերաքննիչ բողոքում նշված փաստարկները դատական սխալի մասին հիմնավորված չեն, և գտնում է, որ Դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում, ուստի բողոքը բավարարելու հիմքերը իրավացիորեն բացակայում են, հետևաբար վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման, որպիսի պայմաններում կիրառման է ենթակա Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 27.04.2023թ. վճիռը անփոփոխ թողնելու Վերաքննիչ դատարանի լիազորությունը:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոնների համապատասխան:

Նկատի ունենալով, որ վերաքննիչ ատյանում այլ դատական ծախսեր բռնագանձելու պահանջ չի ներկայացվել, իսկ բողոքաբերն օրենքով սահմանված կարգով ազատված է վերաքննիչ բողոք բերելու համար պետական տուրք վճարելու պարտավորությունից, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Արամայիս Արսենի Ավետիսյանի վերաքննիչ բողոքը մերժել՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ **ԼԴ/0917/02/21** քաղաքացիական գործով 27.04.2023թ. վճիռը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Դ.ՍԵՐՈԲՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Ս.ԹՈՐՈՍՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Ի.ԲԱՂՄԱՆՅԱՆ

Սույն որոշումը մտել է օրինական ուժի մեջ
Նախագահող դատավոր՝ ---------- Դ.Սերոբյան